ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, Դվին քաղաքը և նրա պեղումները, II, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1982, 163 էջ, XXXII տախտակ։

Բազմավաստակ գիտնական Կարո Ղաֆադարյանի (1907—1976) անունը բաց հայտնի է գիտական լայն հասարակայնությանը։ Նրա աշխատությունները բացառիկ արժեք են ներկայացնում հայագիտության տարբեր բնագավառների ուսումնասիրության համար։ Իր բեղմնավոր կյանքի շուրջ քառասուն տարին նա նվիրեց Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք, տնտեսական, քաղաքական և մշակութային խոշոր կենտրոն Դվինի ուսումնասիրությանը։ Քաղաքի պեղումների առաջին տարիների արդյունքները (1937—1939 և 1946—1950) ամփոփվել են «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատության առաջին հատորում (Երևան, 1952 թ.) և բազմաթիվ հոդվածներում։ Դրանցում փաստորեն նոր հիմքերի վրա դրվեց Հայաստանի միջնադարյան հնագիտության ուսումնասիրությունը և Ն. Մառից հետո առաջին անգամ ըստ արժանվույն գնահատվեց հայկական միջնադարյան քաղաքի դերը երկրի տնտեսական ու սոցիալական կյանքում։ Կարո Ղաֆադարյանի ճարտարապետական ու աղբյուրագիտական խոր իմացությունը կենդանացրեց մեռած քաղաքի պատմությունը և նոր շունչ հաղորդեց հուշարձանին։

Հրապարակի վրա է հեղինակի նոր ուսումնասիրությունը՝ նվիրված Դվինի 1951—1972 թթ. պեղումների արդյունքներին, ուր ամփոփված են շուրջ քսանամյա պեղումների հետևանքով ձեռք բերված բազմահազար հարուստ նյութեր։ Գրքում լայնորեն քննված են ճարտարապետական համալիրները, միջնադարյան քաղաքաշինության, արհեստի, արհեստաղործության տարբեր ճյուղերի և այլ բնագավառների հետ կապված հարցեր։ Կառուցվածքային առումով այս հատորը նախորդի օրգանական շարունակությունն է, միայն՝ նյութերի ավելի հարուստ ընդգրկումով և հարցերի ավելի խոր վերլուծությամբ։

Աշխատության առաջին երկու (հերթական հինգերորդ և վեցերորդ) գլուխները նվիրված են պեղումների բուն պատմությանը։ Սակայն դա փաստերի սոսկ շարադրանք չէ։ Հեղինակն ամփոփ հաշվետվությամբ ներկայացնում է քաղաքի հնագիտական պատկերը՝ վերծանելով միջնաբերդի, ստորին բերդի և կենտրոնական թաղի պեղումներից բացված կարևորագույն հայտնագործություններ։ Դա առաջին հերթին վերաբերում է բնակելի ժողովրդական տան ձևերին, միջնաբերդի ուշ շրջանի պալատական կառույցներին, քաղաքի թաղամասերից մեկում բացված, իր չափերով բավականին մեծ, վաղ միջնադարյան կարավանատունը, քաղաքի տարբեր հատվածներից գտնված մետաղե իրերի, ապակու և խեցեղենի արհեստանոցների մնացորդներին և այլն։ Այս հենքի վրա ընդհանրություններ են արվում արհեստագործության տարբեր ճյուղերի վերաբերյալ։ Դվինը միջնադարյան արհեստի խոշորագույն կենտրոններից էր և այքի էր ընկնում իր բազմակողմանի արտադրանքով, որը քաղ հայտնի էր ներքին ու արտաքին շուկայում։ Կ. Ղաֆադարյանը փաստերով ներկայացրել է այդ արտադրանքի բնույթը, դրա տեղը անդրկովկասյան և մերձավորարևելյան կենտրոնների շարքում՝ իր ասածը լրացնելով պատմական, ազգագրական և այլ կարգի աղբյուրներով։

Գրքում հատկապես արժեքավոր են այն հատվածները, որոնք վերաբերում են շերտագրության հարցերին։ Դվինը բազմաշերտ հուշարձան է. վեր հանել վերջինիս դարերի ընթացքում խճողված պատկերը, այն դնել ժամանակագրական որոշակի շրջանակների մեջ՝ օգտագործելով ճարտարապետական, աղբյուրագիտական , դրամագիտական ու հնագիտական նյութերը, մեծ փորձ և գիտելիքներ է պահանջում։ Բազմաբեղուն գիտնականի լավագույն ծառայություններից մեկը հենց Դվինի շերտագրության հարցերի լուծման որոշակի ներդրումն է։ Այդ նպատակով քաղաքի տարբեր մասերում կատարված պեղումները ցույց են տվել, որ հուշարձանը գոյություն է ունեցել դեռևս մ. թ. ա. III հազարամյակում։ Մ. թ. ա. I հազարամյակում այն եղել է պաշտամունքային խոշոր բնակավայր՝ ուրույն մշակույթով, ճարտարապետական կառույցներով, մեհյաններով։ Բնակավայրն իր գոյությունը շարունակել է Արտաշեսյանների օրոք՝ ընդ-

հայ մինչև Արշակունիները։ Հեղինակը սասանյան և արաբական շրջանի շինությունները հատակ սահմանազատել է ավելի ուշ շրջանի կառույցներից։

Հատորում զետեղված նյութերի քննությունը հիմնակաուում կատարվում է մինչև XI դ. վերջը, քանի որ քաղաքի գոյության վերջին շրջանի նյութերի մեծ մասը տեղ են գտել աշխատության առաջին հատորում։ Դվինի նման խոշոր հուշարձանի շուրջ բան տարվա պեղումների արդյունքները ներկայացնել մեկ գրքով բավական բարդ և պատասխանատու աշխատանք է։ Կ. Ղաֆադարյանը այդ խնդիրը լուծել է հմտորեն. նա հատորի առաջաբանում ամենայն բարեխղճությամբ հղել է 1952—1975 թթ. արշավախմբի անդամների հրատարակած մոտ 40 հոդված և մենագրություն, որոնք, ըստ էության, լրացրել են նրա աշխատության տարբեր հատվածները։

Մենագրության երրորդ գլուխը (հերթական յոթերորդը) նվիրված է Դվինի ճարտարապետական նորահայտ հուշարձաններին։ Այստեղ խիստ կարևոր է 1961—1962 թթ. քաղաքի միջնաբերդի արևելյան հատվածում բացված բազիլիկատիպ մեծ շինության մնացորդների խնդիրը, որը հեղինակի դիպուկ բնորոշմամբ Արշակունիների գահանիստ դահլիճն է և թվագրվում է IV դ.։ Այն Դվինում պահպանված միջնադարյան աշխարհիկ կառույցներից ամենավաղագույնն է և կապվում է Խոսրով Բ-ի շինարարական գործունեության հետ։ Կ. Ղաֆադարյանը բառնակողմանի վերլուծել է նմանօրինակ հուշարձանները և ճիշտ գնահատել դրանց կիրառական նշանակությունը։ Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում գահնամակի և զորանամակի հետ առնչվող մեկնաբանությունները, որոնցից ելնելով հայկական նախարարական տների թիվը, քանակական առումով, կապվում է գահանիստ դահլիճի չափերի հետ։

Դվինի երկրորդ մեծ համայիրը նույնպես բացվել է միջնաբերդում, որը կառուցված է հում, մեծ ապյուսներով։ Այդ շինության կենտրոնական առանցքը սենյակներով շրջապատված բակն է։ Կ. Ղաֆադարյանը, ելնելով շերտագրական տվյալներից, շինությունը թվագրում է VIII դ. սկզբով և այն համարում արաբ ոստիկան Աբդուլ-Ազիզի նստոցը։ Իր այս ենթադրությունը նա ճշտում է հայկական աղբյուրների այն վկայություններով, որոնք Աբդուլ-Ազիզին են վերագրում Դվինի ամրոցի վերակառուցման ու ամրացման որոշ աշխատանքներ[1]։ Միաժամանակ ընդգծվում է, որ հիշյալ շինությունն իր կառուցվածքային առանձնահատկություններով խորթ է հայ իրականությանը։

Միջնադարյան բնակելի տների ուսումնասիրության առումով ուշագրավ են Դվինում բացված աշխարհիկ նշանակությամբ շենքերի մնացորդները։ Գրախոսվող հատորում հեղինակը վերականգնել է այդ տների հատակագծերը և, ամենակարևորը՝ աշխարհիկ կառույցների խոր վերլուծությամբ ներկայացրել է քաղաքի սոցիալական պատկերը։

Մենագրության հաջորդ ութերորդ գլուխը, վերաբերում է հեթանոսական շրջանի դամբարանների և բնակավայրի ստորին շերտի պեղումներին։ Դվինի դամբարանադաշտը շատ հետաքրքիր նյութեր է տալիս հատկապես Հայաստանի հին շրջանի քաղաքակրթության վերաբերյալ։ Գիտնականը կատարել է դրանց խոր վերլուծությունը՝ շեշտելով արձանների դերը հայոց հին պաշտամունքում, իսկ այդ արձանների ոչնչացումը, իրավամբ, նա կապում է քրիստոնեության մուտքի հետ։ Դվինի ստորին շերտից գտնվել են հարուստ նյութեր Հայաստանի մ. թ. ա. I հազարամյակի սկզբի հոգևոր և նյութական մշակույթի վերաբերյալ։ Քանի որ դրանք հրատարակվել են[2], ներկա գրքի հեղինակը աշխատել է կուռ, ամփոփ շարադրանքով բնորոշել այդ մշակույթի հիմնական գծերը։ Հատկապես հետաքրքիր են նրա դիտողությունները պաշտամունքային առարկաների և կառույցների մասին։ Սակայն հիշյալ շարադրանքում չի կարելի համաձայնվել հեղինակի թվագրության հետ՝ մ. թ. ա. V—IV դդ.։ Դվինի մ. թ. ա. IX—VIII դդ. շերտերը բավական ստույգ թվագրված են ինչպես տեղում հայտնաբերված նյութերով, այնպես էլ Հայաստանի այլ վայրերից հայտնի բազմաթիվ զուգահեռներով[3]։

Գրախոսվող աշխատությունն ավարտվում է հավելվածով, ուր շոշափվում են Դվին քաղաքի պատմության և մշակույթի հետ կապված հարցեր։ Ուշագրավ է հեղինակի այն վարկածը,

---

1 «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», ՍՊբ, 1887, էջ 36։

2 К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977.

3 Նույն տեղում, էջ 107—108։

Թե տեղում հայտնաբերված կնքադրոշմները կապվում են «Գիրք Թղթոցի» նյութերի հետ, որոնք պահվել են Դվինի դիվանում։ Կնքադրոշմների հարցը բավական բարդ է և խճճված։ Սասանյանների շրջանում դրանք օգտագործվել են տարբեր նպատակներով և առավելապես՝ առևտրական գործարքների ժամանակ։ Հայկական աղբյուրները, հատկապես «Գիրք Թղթոցը», բավարար նյութեր են ընձեռում հայ իրականության մեջ փաստաթղթերի վավերացման վերաբերյալ։ Մեզ թվում է, որ հեղինակին հաջողվել է շրջանառության մեջ դնել այդ աղբյուրներից մեկը։ Այս բաժնում հետաքրքիր են հեղինակի դիտողությունները Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի վերաբերյալ։ Պատմագիտությանը հայտնի են Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի վկայությունները Խոսրով Կոտակի կողմից Դվինում շինարարական աշխատանքներ կատարելու և արքունիքն այնտեղ տեղափոխելու մասին[4]։ Այնուհանդերձ, հեղինակի խոսքերով ասած, կան մի քանի «ժամանակավրեպ» տեղեկություններ, որոնք հնարավոր են համարում IV դ. առաջ Դվինում քաղաքային բնակչության գոյության փաստը։ Դժվար է համաձայնվել նման հարցադրմանը, քանի որ հնագիտական նյութերը բացառում են քաղաքային բնակչության առկայությունը Դվինում։ Ընդհակառակը, պեղումները հաստատում են հելլենիստական շրջանում Դվինի տարածքում փոքր բնակավայրի գոյության փաստը, որը սերտ կապերի մեջ էր Արտաշատի հետ։

Աշխատությունն ունի ռուսերեն լեզվով ընդարձակ ամփոփում և հարուստ նկարագրություն, որոնք մատչելի են դարձնում այն ոչ հայ ընթերցողներին։

Կարո Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատության երկրորդ հատորը նոր, կարևոր ներդրում է հայ միջնադարյան հնագիտության ուսումնասիրության բնագավառում։ Մենագրության մեջ բերված նյութերը և առաջ քաշված հարցերը միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության գործում խիստ արժեքավոր են։ Կասկածից վեր է, որ անվանի գիտնականի ինչպես նախորդ, այնպես էլ այս հատորը լայն ընդունելություն կգտնի հայրենական ու արտասահմանյան գիտական շրջանակներում։

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

---

[4] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 265, «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1889, էջ 18։